



Տպարանս փոխադրուած է Պապը ալի
նատտէսի թիւ 38, Իգտամ լրագրին դէմ:

THE UNIVERSITY OF CHICAGO
LIBRARY

PHYSICS

1892

1892


1892

1892

1892

1892

1892



ՀԱՆԳԻՍ

ՏԱՍՆՕՐԵԱՅ

— هانراكيداق —

مجموعه علوم

HANRAKIDAGUE

JOURNAL ARMÉNIEN ENCYCLOPÉDIQUE

Ե. ՏԱՐԻ — ՆՈՐ ՇՐՋԱՆ

ԹԻԻ 20

10 ՄԱՅԻՍ 1902



ՎՍԵՄ. ՊՕՂՈՍ ԷՖ. ՊԱՌՆԱՍԵԱՆ

ԹԱՐԳՄԱՆ ԿԱՅՍԵՐԱԿԱՆ ՊԱՆԱՏԱՆ

Ե Ի

Ա. ԹԱՐԳՄԱՆ-ԲԱՐՏՈՒՂԱՐ ՏՊԱԳՐԱԿԱՆ ՏԵՍԶՈՒԹԵԱՆ

«Պողոս Էֆ. ծնած է Արապկիր, 1841ին: Իւր նախնական ուսումն առնելէ ետեւ՝ 1859ին Կ. Պոլիս եկած եւ շարունակած է իւր ուսումները: 1864ին մտած է Բ. Դրան Տպագրական Սենեակը, եւ 1868էն մինչ 1881՝ աշխատակցած է հանգուցեալ Ֆիլիք Էֆենցիի հրատարակած Թուրքերէն քերթերուն, որոց վերջինն է «Թարիգ»: 1880էն մինչ 1884՝ աշխատակցած է նաեւ Միսհաթ Էֆենցիի հրատարակած Ֆրանսերէն եւ Թուրքերէն լրագրին միմիայն Ֆրանսական բաժինին: Այս գրուոր աշխատութեանց հետ շարունակած է մինչեւ ցարդ իւր պաշտօնական պարտաւորութիւնները: 1888ին ընդունուած է նաեւ Կայս. Պալատի քարգմանչութեան պաշտօնին: Ի վարձատրութիւն Իւր ծառայութեանց ստացած է Ռուսի Բ. աստիճան եւ Օսմանիյէ ու Մեհիսիյէ պատուանկաններուն Դ. աստիճանը,

«Նոյն ասեցի «Մասիս» ներուն մեջ խմբագրած է քիչ ժամանակ, եւ 1876-78 թթ. ուսականներուն Կայսերական Կառավարութեան մասին դրուատալից յօդուածներ գրած է հիւրեւելի քեցամսլից հրատարակութիւնները: Այդ յօդուածները հրատարակուած են նաեւ «Լա Թիւրքի» լրագրին մեջ, որ արտաքին գործոց նախարար հանգուցեալ Սաֆուլէր փաշայէն վնասատուելով, «Մասիս» ի 10 ոսկի ամսաթուակ շնորհած է, ի վարձատրութիւն այդ հաւատարիմ ծառայութեան, որ բաւական տարի վնասուելէն ետեւ մեկ միջոց մը իւր խնայութիւն ընդհատուած եւ, բայց Կայսերական լրագրի նման Կառավարութիւնը վերջերս նորէն շնորհած է զոր ցարդ կ'ստանայ «Մասիս» ի հիմնադիր Կ. Ս. Իւրիւնեան Էֆ:»

Ի վերեւ չափերտուած տողերն՝ իրենց մէջ մի բառով ու շարադասական ձեւով եւ կէտադրութեամբն հանդերձ, Նորին Վսեմութիւն Պողոս Էֆենցիի Պառնասեան ինքն իւր խղճամիտ ու խնամատ, կարի ամէկոտ ու մտածկոտ գրչովը գրած ու աւանդած էր «Հանրագիտակ»ի տպագրիչ ու հրատարակիչ, իւր վաղեմի ու սիրելի բարեկամներէն Տիար Նշան Պէրպէրեանի որ ինձ յաճձնէր, իւր վաղամեռիկ սիրական անդրանիկ աղջկան եւ Մեղպոլեան վարժարանի հանձարեղ ու աւարտավարժ Պապկեալ ուսանողուհի, վաղամեռիկ ԼՈՒԿԻԱՅԻ յիշատակին ու

պատկերին հետ՝ Իւր պատկերն ալ հրատարակել փափաքելու պարտաւոր պատշաճին առթիւ: Մեր թախանձանքէն հարկադրեալ գրած էր Վսեմ. Հանգուցեալն այդ տողերը, որոնց ինքնութեան վրայ է Տիար Նշան Պէրպէրեան. տողեր, որոնք նուիրական ու անձեռնմխելի են այլ եւս, եւ որոնց մէկ գրախեցը, յովտ մը տնդամ փխելն սրբապղծութիւն կը համար ինք: «Հանրագիտակ»ի տրդէն հրատարակած տոյն վաւերական կենտոգիր գիծերն եղան



ՕՐԻՈՐԻ ԼՈՒԿԻԱ ՊԱՌՆԱՍԵԱՆ

նաեւ աղբիւր ուրիշ թերթերու պաշտօնական կենտոգրականներուն: Վսեմ. Հանգուցեալը «Հանրագիտակ»ի գրաքննիչն հատընտրուած էր թերթիւն ծնունդէն ի վեր եւ իւր թանկագին ու հանրագուտ կեանքին ամենուտ տխրութիւ վախճանը պատճառող հիւանդութենէն (աղետոյ բորբոքում) որ մը առաջ՝ հակառակ իւր ծայր աստիճան տկարութեան՝ պաշտօնատունէն վերադարձի պահուն — աւա՛ղ, վերջին վերադարձն եղած էր ան — հոճեցաւ թախանձանքիս համակերպիլ իրեն յատուկ քմիծաղ հաւանութեամբ մը, տեղ մը քաջուիլ ու գրաքննել իմ Լաջը՝ Բարեկամիս Գեղեզմանին վրայ ձեռագիրս, որ տնձա՛հ Մամուրեանի յիշատակին նուիրուած էր: Նա շատ ու շատ սիրած եմ Մամուրեան Էֆենցիին, ըսաւ, եւ

իր յիշատակին նուիրում ամէն այս տեսակ սրտագին ու պարկեշտ գրում , ինծի համար գրում չէ՞ս կը սիրեմ կարգալ ու ստորագրել , միայն թէ , աւելցուց , եթէ ես ալ մեռնեմ (Աստուած չընէ՞) գերեզմանիս վրայ այս արտասուող ոճով բան մը կը գրես հարկաւ , ըսաւ իրեն սովորական իմաստասէրի յատուկ ու սրամտութիւնն բուրով հոգեբանայան հազուադէպ քմծիծաղովը :

Վսեմ. Պառնասեան Պողոս էֆէնտիին նկատմամբ մեր անձնական տպաւորութիւնները զալ անգամ պիտի գրենք կցելով մենոր հետ և Ազգային մամուլէն գտա՝ Տարազգի մամուլին զնահատումները . որոյ մէջ նշանաւոր է Օսմանեան Մամուլին պատիւն ու փառքն աւելցնող ու առաջնակարգ ներկայացուցիչն եղող ԻԴՏԱՄ լրագրին տաղանդաւոր խմբագիր և արժանաւոր արտոնատէր Ճէվուէդ Պէյի գրածը , որ բոլոր հայ խմբագիրները կարմրեցնելու չափ վսեմ , յատկացուցիչ ու արու ոճով մը ի վեր հանած է Վսեմ. հանգուցեային բոլոր խոհական , անհատական , պաշտօնական թէ գրագիտական անժխտելի և ընդօրինակելի հանգամանքները :

Մեր ու ամենուս խորին վշտակցութիւնն ու համակրութիւնը առ նաղելաշուք ու հանձարեղ Օրիորդ Վիկտոր Պ. Պառնասեան որ Վսեմ. հօրն ազնիւ արեան հետ ժառանգած է նաեւ անոր հոգեկան , բարոյական ու իմացայան բոլոր հատընտիր ձիրքերն ու կը մնայ միակ ժառանգ իր սիրտիան ու սրտուական հայրիկին :

Ա. Լ.

ԽՂՃԻՆ ԶԱՅՆՐ

[ԲՍԸՈՅԱՎԷՊ]

Ա.

Այն իրիկուն սովորականէն շատ կանուխ տուն վերադարձած էր Յակոբ դպրոցէն : Իրիկնադէմի հակած ճառագայթները դեռ ասդին անդին կը հեւային նուազկտ , իրիկուն ըլլալու դեռ երկու ժամ կար : Մինչդեռ ան սովորական օրեր մայրամուտէն եւ

արձակուրդէն շատ վերջ տուն կը վերադառնար խաղալէ և վաղվուսելէ քրտին բծով կտրած , և տանց համար քանի՞ քանի՞ անգամներ հայրիկէն ծեծ ալ կերած էր :

Վարժապետը արձակուրդի զանգալը չափոնց հնչեցուցած էր այն օր . հինգ վայրկեանէն դպրոցին մէջ աշակերտ մնացած չէր , մի միայն Յակոբ իր գրասեղանին վրայ կքած՝ յամառ աշխատութեամբ կը գրէր ու կը գրէր . դուրսը , ընկերները բակին մէջ իրենց արձակուրդի սովորական խաղը կը խաղային անմեղ և զուարթ կանչուողութեամբ , և քանի կը լսէր այդ աղաղակները սիրտը կը հատնէր երթալ միանալու համար անոնց : Աչքերը վեր վերցուց յանկարծ և « ա՛հ ժամանակը կ'անցնի կոր , երթալ քիչ մըն ալ խաղալու եմ » , մրմնջելով գրիչը ձեռքէն վար ձգեց ու սկսաւ դիրքերը հաւաքելու պատրաստուիլ : Դիտարկը գլուխը դրաւ , դիրքերը ծրար կապեց և անութին տակը առնելով խելիսը փութիտութեամբ մը քայլերը արագ արագ նետել սկսաւ : Հագիւ թէ քանի մը քայլ տուած էր , յանկարծ աչքի տարտամ պտոյտով մը քովի դռնապանին վրայ մոռցուած աղուոր ոսկի գրիչ մը տեսաւ : Ի՞նչ աղուոր բան , ահա իր ուզածը , բան մը որուն երկար ատենէ ի վեր կարօտ կը քաշէր և որմէ հատ մը ծախու առնելու համար , միտ կ'ալաչէր հայրիկին : Վայրկեան մը շուարած կեցաւ գրասեղանին առջեւ « առնեմ-չտանեմ » ի վարանանքն ըրով , չորս կողմը նայեցաւ անգամ մը , մարդ մարդասանք չկար սրահին մէջ , լուսնիւն ամէն կողմ . ձեռքը տուաւ գոնէ լաւ մը դռններու համար , տունց սակայն գրպաւելու դիտաւորութեան , և քանի մը անգամ դռն ձեռքին մէջ դարձնելէ վերջ՝ անոր գեղին ու հրապուրէն ինքզինքը մնացած՝ գրպանը դրաւ զայն և առանց ետին նայելու բակի խաղցող տենդոտ խմբակին քովէն կայծակի արագութեամբ սլացաւ դէպի տուն :

Սրտի տեսակ մը վրդովիչ ուրախութեամբ դռնէն ներս մանելով Յակոբ , դիրքերուն ծրարը մէկ կողմ նետեց և տպաւորման մը տիկ ընելու մօրը հարցումներուն կրկին տունէն դուրս նետուեցաւ առանձին . դիտող աչքերէ հեռու վայր մը քաշուելու համար , ուր իր գողօնը կրնար ապահով վայելիլ : Իրենց տան ետեւի պատին տակ Յակոբ եր-

կար տեսն իր ոսկի գրիչը անյադ զմայլանքով մը դիտելէ վերջ՝ այն ինչ արեւը դէմէն մարը կը մտնէր. կրկին տուն վերադարձաւ իրիկուան ճաշին ներկայ գտնուելու համար. Բայց Յակոբ այն իրիկուն շատ քիչ բան կրցաւ ուտել. ճաշը լմնալուն պէս ամէն ոք հայրիկին շուրջը բոլորուած կը զուարճանար օրուան անցուդարձով, մինչ Յակոբ անդին անկիւն մը ամբած ու ձեռքերը դրպանը խոթած, կը խոկար լռիկ միջիկ ինքնայատուկ մտածումներով, մերթ ընդմերթ կը ծիծաղէր սոսկ համակերպելու և իր մտածումները պարտկելու համար. սակայն մայրը երբեմն կը վրդովէր զուկին այս խոհանքը կարգ մը շտապեցուցիչ հարցումներով — « Ի՞նչ ունիս, Յակոբ, սիրելիս, վարժապետդ ծեծեց, դասդ չէիր դիտեր, ինչո՞ւ դպրոցէն ալ այդչափ կանուխ եկար, մերազ մը ունի՞ս »: Մինչ Յակոբ կը կեղծէր « չէ՛, մայրի՛կ, բան մը չունիմ » թոթովելով:

Պատկերու ժամանակը մտեցած էր ալ. ուստի Յակոբ ելնելով տեղէն իր սենեակը դնաց ուղղակի, որուն դուռը լաւ մը գոցելէ վերջ « Փառք քեզ Աստուած, ալ հոս մարդ չկայ, ուզածիս պէս կրնամ նայիլ » ըսելով ճրագին դէմ գնաց, և հանելով գորպանէն ոսկի գրիչը, զոր պինդ ու պինդ կը սեղմէր ձեռքին մէջ, ամէն կողմը ուղի ուղի դիտեց և ապա « Ի՛նչ ալ սիրուն է, մարդ ալ չտեսաւ առնել » ըսելով անկողին մտաւ և քանի մը ընդէն արթուն մնալէ վերջ քնացաւ ու երազեց:

Բ.

Ծաղկախոտ... քաղաքին մէջ ընդհանուր կոտորած մը տարած էր, պղտիկներու այս անողոք թշնամին որուն բուն նպատակը թէպէտ և ծաղիկներ խամրեցնել էր, երբեմն չափահասներ ալ կ'առնէր կը տանէր պղտիկներուն հետ միատեղ. հարուստէն բռնէ մինչեւ աղքատը ամէն անոնք որ զաւակներ ունէին, անհուն ահ ու դողի մը ենթակայ դուռները ամուր կը գոցէին այս ուսերիչ ախտին դէմ: Յակոբին ծնողքը մեծ մոտատանջութեան մէջ էին, որովհետեւ դեռ իրենց զաւակը չէր ծաղկած և հայրաւոր այսչափ զգուշութեանց ծաղկախոտը այդ տու-

նէն ալ ներս մտաւ իր հատու մանգաղը ի ձեռին: Յակոբ այդ բարեկեցիկ տան մէկ հատիկ ծաղիկը՝ ծաղկախոտի մահաբոյր անկողնոյն մէջ կը խամրէր անհնարին ցաւերով: Եւ այդ ճիւղը հրէշը, կարծես բոլոր մոլեգնութիւնը այս խեղճ մէկ հատիկին վրայ թափել ուզելով, մարմնոյն ամէն կողմէն ուռուցիկ պալարներ կը փուսցնէր, պալարներ՝ որոնք մահուան ծարաւը կը քամէին անար սրտին մէջ: Ո՛չ բժիշկներուն դեղմափը, ոչ ալ ծեր մամիկներու աւանդական միամիտ աղօթքները օգուտ մը ըրած էին. « ալ յոյս չկայ կը մեռնի » ըսած էին ամէն ալ: Եւ խեղճ Յակոբ իրաւ որ գերեզմանին ծայրը մտեցած էր. վառն գիւղէքը կուրցած, ձեռներն ալ կ'իծոտած էին: Այլ եւս ամէն ալ Յակոբը իր առջի խաղաղութեամբը վերստին կենդանի տեսնելէն յոյսը կտրած « Աստուած թող չմեռցնէ ան փնաս չունի, թող աչքերը կոյր, ձեռքերն ալ կ'իծոտած ըլլան » կը մրմնջէին: Գթութեան Աստուածը երեսին նայելով նորէն Յակոբիկը ետ վերադարձուց իր ծնողաց: Բայց հիմա բնական է Յակոբ այլ եւս առաջուան Յակոբը չէր. ծաղկախոտի թափէն աչքերը կուրցած, ձեռքերը կ'իծոտած անդամալոյծ մը, ի՛նչ դժբաղդ վիճակ, գրեւ կարգաւ այլ եւս երկրէն մինչեւ երկինք հեռու էին իրմէ. այլ ևս ոչ երկաթէ ոչ ալ ոսկիէ գրիչ կրնար գործածել: Եւ Յակոբ կուլար իր բաղդին վրայ, կ'անիծէր ծնունդը, հին օրերը կ'երազէր ու կը հեծեծէր:

Գ.

Առաւօտեան դէմ Յակոբ աչքերը բացաւ ընդոտ, մարմինը պող քրտինքի մէջ կը լողար. անմիջապէս ձեռքը աչքերուն տանելով քանի մը անգամ չփեց, և ապա արշալոյսի տոյն ճերմկութեանը մէջ աչքերը լայն լայն բանալով « Փառք քեզ Աստուած, երազ է կզեր մրմնջեց »:


Սակայն ո՛րտը տարօրինակ կերպով կը բարախէր, տեսալ մը վախ զինքը դրաւած էր: Յիշեց մայրիկին այն խօսքը թէ դեռ ինք տակաւին պիտի ծաղկեր և թէ այդ հիւանդութիւնը կրնար վտանգաւոր դառնալ: Եւ ո՛վ դիտէ, արդեօք երազը աղբարարութիւն մը չէ՞ր արդեօք... Յակոբի աչքերը

գրիչին հանդիպեցան, եւ սոսկումի արհաւիրքը նկարուեցաւ դէմքին վրայ...

Վարժապետը շատ զարմացաւ երբ այդ առաւուն կանուխ Յակոբ իր սենեակը մտաւ: Յուզումով լսեց անոր մեղքին պատմութիւնը որովհետեւ կը տեսնէր թէ խիղճին ձայնը իր գործը կը կատարէր:

Այնժամ, Կ. Թ. Գօլէճ

ԶԳԱՅՆԻԿ



ՍՊԱՆԻՅԻ ԹԱԳԱԽՈՐԻՆ ԳԱՀԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ

Սպանիոյ երկտասարդ թագաւոր Ալֆօնսօ ԺԳ. (իւր մկրտութեան անունն է Ալֆօնսօ Լէոն Ֆէրնանտօ Մարիա Սանդիակօ Իդիտրօ Բասքուալ Մարսիան Անդուսիօ), ծնած է 1886 Մայիս 17ին: Ըսել է այսօր 16 տարեկան է, եւ երկրին օրէնքին համաձայն



չափահաս կը սեպուի: Ամբողջ Սպանիա ընդհանուր ցնծութեամբ կը տօնէ իր դեռատի վեհապետին գահակալութիւնը:

Մարի Բրիտտին՝ Մայր թագուհին ամբողջ աշխարհի ծանօթ է իւր մաքուր վարքով, բարեկրթութեամբ ու զարգացեալ բարձր դատարարականութիւնովը. միշտ բարի ստորադասեալներուն համար, աւելի մայր մըն որ իւր հպատակներուն: Բրիտտինէ թագուհին՝ իր զաւակը՝ ապագային ունենալիք բարձր կոչումին համար պատրաստելով, չէ մոռցած բնաւ բարոյական կողմն ալ, եւ այս օրուան Սպանիոյ թագաւորը սրտով ու մտքով տիպար իշխան մըն է:

Դեռատի թագաւորը բարձրահասակ սիրուն պատանի մըն է. պզտիկութեանը թէեւ հիւանդոտ էր՝ բայց տարիքին հետ միասին ոյժն ալ վրայ եկաւ. թուիս դէմքով, սեւ մազերով ու աչերով՝ քիչ մը վեհափառ Մօրը կը նմանի, ճակատը բարձր է ու բերանը միշտ ծիծաղկոտ ծալք մը ունի:

Խնամակալ թագուհին, թէ եւ Աւստրիացի Մեծ-Դքսուհի մըն էր, սակայն միշտ զաւկին հետ սպաներէն կը խօսէր: Ներաւերակներուն մէջ, Քաթիլեան հին արիւնը կը հոսի, իւր նախնեաց մէջ ունենալով սպանիական հին վեհապետներ:

Տառնովեց տարեկան այս վեհապետը՝ Սպաներէնէ զատ կը խօսի Անգլիերէն, Ֆրանսերէն ու Գերմաներէն: Տկար կազմին հետեւանքով ստացած կրթութիւնը շատ ճոխ չէ, որովհետեւ ժամանակ եղաւ որ երկարատեւ դասերը ընդհատել պէտք եղաւ. սակայն Ալֆօնսօ ԺԳ. իւր տարեկից հասարակ շատ տղաքներէ խիստ աւելի բան գիտէ:



ԲՈՒՍԱԲԱՆԱԿԱՆ ԴԱՍԵՐ

Ա. Բ Մ Ա Տ Ը

Պզտիկ բարեկամներս:

Անցեալ անգամ ձեզի խոստացած ըլլալով նկարագրել բոյսերու գործարանները, եւ անոնց վրայ խօսիլ՝ այս անգամ կուգամ կատարել խոստումս, եւ քանի որ կ'ուզէք բուսաբանական դասերս մտիկ ընել, դուք ալ անշուշտ քանի մը պզտիկ ձանձրութիւններ յանձն կ'առնէք: Լա'ւ ուրեմն, ձեր մէջէն ամէնէն ճարտարը թող երթայ պարտէզէն մանիչակի մատղաշ տունի մը հանէ զգուշութիւնով, եւ հոս բերէ: (Պատ. 1)

Նայեցէ՛ք, տեսէ՛ք տունիկին սա վարի մասը ամբողջովին հողին մէջ թաղուած էր, այնպէս չէ՞. ասիկա բոյսին արմատը կը կոչուի: Արմատն է որ բոյսը հաստատուն կը պահէ հողին մէջ:

— Բայց նախ ըսէ՛ք թէ ի՞նչպէս յառաջ կուգայ արմատը, կը հարցնէք ինձի:


— Երբ հունտը կ'ուռի, անոր բլթակ-

ները կը զատուին եւ սաղմը կըսկսի արգասաւորուիլ, այն ատեն ամէնէն առաջ ար-



(Պատ. 1)

մատիկը վար կ'երկարի, պզտի ծիւ մը՝ որ հետզհետէ կ'սկսի զարգանալ, երկարիլ. այս



(Պատկ. 2)

առաջին արմատը՝ տունկին գլխաւոր արմատն է։ Մեր հանած մանիշակի տունկին

գլխաւոր արմատը այն մասն է՝ որ ցողունին հողէն դուրս մնացած մասին վարի կողմէն հողին մէջ կ'երկարի։

— Բայց ասոր վրայ մանր մանր, բարակ թելեր կան. ասոնք ի՞նչ են։

— Ասոնք կը կոչուին ծծող մազեր, եւ արմատին ամէնէն էական եւ անհրաժեշտ մասերն են որ հողին մէջ հաստատուելով ամբողջ բոյսը հաստատուն կը բռնեն։ Բան մը նշմարեցի՞ք երբ այս տունկն հողէն հանեցիք. քիչ մը դժուարութիւն քաշեցիք, թէեւ այս տունկը մատաղ եւ տկար էր. ասոր պատճառը այդ ծծող մազերն էին, որոնցմէ արդէն բաւական թուով փրցուած են ձեր հանած միջոցին։ Յետոյ, դեռ պիտի տեսնէք թէ այս պզտիկ մազմուկները՝ որոնք պարզապէս մէկ մէկ մազանման խողովակներ են, ինչպէս հրաշալի զեր մը կը կատարեն։ Անոնք են որ հողէն կը ծծեն բոյսին հարկաւոր եղած սնունդը՝ հեղուկի ձեւին տակ։

Կը տեսնէ՞ք, գլխաւոր արմատը կարծր մասով մը վերջաւորուած է. ասիկա կը կոչուի փակեղ (երկրորդ պատկերին մէջ Ա.) որ փայտային հիւսուածք մըն է, ասիկա ալ արմատին կարեւոր մասերէն մէկն է, որովհետեւ անիկա է որ արմատը կը պաշտպանէ հողին մէջ երկարած ատեն անոր հանդիպող քարերուն կամ ուրիշ կարծր մարմիններու դէմ։ Մազմուկները զոր կը տեսնեք (նոյն պատկեր Բ.) տունկերու գլխաւոր արմատներուն վրայ, որչափ որ արմատը զարգանայ, այնքան վերի կողմէն պիտի թափին, եւ վարի կողմէն պիտի շատնան նոյն թուով առանց տարբերութիւն մը յառաջ բերելու։

Որչափ որ ծառը զարգանայ եւ արմատը երկարի, գլխաւոր արմատին վրայ առաջ պիտի գան ուրիշ արմատներ՝ որոնք երկրորդական արմատներն են, ասոնք ալ իրենց կարգին ծնունդ պիտի տան երրորդական արմատներու, եւ այսպէս շարունակաբար պիտի աճին, իւրաքանչիւն կրելով իր փակեղն ու թելամազերը։


Ազուր որ մը դաշտերը ելեք. հոն շատ տեսակ բոյսեր կրնաք գտնել. հանեցէ՛ք անոնցմէ եւ քննեցէ՛ք արմատները. պիտի տեսնէք որ անոնցմէ մէկ քանիին գլխաւոր արմատը երկրորդական արմատներէն աւելի աճած է. ասոնք կը կոչուին ուղղաւարտներ։

(Պատ. 3 ծակնդեղ): Պիտի գտնէք ուրիշ տունկեր ալ՝ որոնց երկրորդական, երրորդական եւն արմատները հաւասարապէս զարգացած են, ասոնք ալ կը կոչուին թե-



(Պատ. 3)

լարմատներ (Պատ. 4. Յորենի արմատ): Թէեւ լսած էք եկամուտ կոչուած արմատներուն վրայ խօսիլը. ասոնք սաղմնային արմատէն առաջ եկած չեն, այլ՝ լոյ-




(Պատ. 4)

սերու ո եւ է մէկ կէտէն՝ վերջը բուսած պզտիկ արմատներ. ընդհանրապէս, երբ ցորենը ու եգիպտացորենը չափ կանախ կը կորսնցնեն իրենց գլխաւոր արմատը, անոր


տեղ ցօղունին վարի կողմը առաջ կուգան այս մակարոյս արմատները:

Կաղամախը, եղէգը, կովացնծուկը, վարդը, ուռենին, թզենին չափ ընդունակ են այս մակարոյս արմատներուն, այնպէս որ եթէ անոնցմէ մէկ մէկ ձիւղ անկենք խոնաւ հողի մը մէջ, անոնք շուտով արմատ-



(Պատ. 5)

ներ կ'արձակեն. անշուշտ այս իրողութիւնը ամենքնիդ ալ անձնական փորձով գիտեք, քանի որ ձենէ շատերը արդէն վարդի ձիւղեր տնկած եւ ունեցած են վարդի տունկ կամ բոյսեր՝ որոնց արմատները ուռած են, կամ ըսենք մէկ մէկ այտուցներ են. ինչպէս գետնախնձորը. այս տեսակները կը կոչուին ելնդաւոր արմատներ կամ ուռաւմաս



(Պատ. 6)

Այս տեսակ արմատները երբեմն մէկ հատ կ'ըլլան եւ երբեմն ալ մէկ քանի հատ՝ իրարու քով ժողվուած, ինչպէս է գորգինային արմատը: (Պատ. 6):

Արմատներուն այս զանազան տեսակները ճանչնալէ ետք, հիմա կրնանք անցնիլ արմատին պաշտօնին:

Արդէն տեսանք թէ արմատն է որ բոյը հողին մէջ հաստատուն կը բռնէ. ասիկա թէեւ կարեւոր դործ մըն է գոր կը կատարէ

տանց որուն բոլոր բոյսերը պիտի տապա-
լէին. սակայն արմատին գլխաւոր դերը կը
կայանայ տունկին սնունդը հայթայթելուն
մէջ. ինչպէս գիտենք, բոյս մը ապրելու
համար պէտք ունի օդային և հանքային սը-
նունդներու. արդ, հանքային սնունդը մա-
տակարարողը՝ արմատն է. ան իր հազարա-
ւոր բերանները (մազմզուկները) դրած հո-
ղին ներքին ստինքներուն առջեւ, անդադ-
րում կը ծծէ բոյսին պէտք եղած սնունդը.
այս վերջինը՝ ծծող մազերէն կ'երթայ ար-
մատին մէջ և արմատն ալ իր խողովակնե-
րով վեր կը դրկէ զանի ցօղունին մէջ եւ
անկէ ալ տունկին բոլոր մասերը:

ԱՇՈՏ Յ. ՊԱՉՊԱՉԵԱՆ



Գ Ո Ղ Ը

Գիւղին մէջ, գրեթէ ամայի տեղ մը,
որ մի քանի հին եղեւիններ կային, գեղջ-
կական սիրուն տուն մը կ'երեւէր:

Ձմեռ էր. տուներու տանիքները, եղե-
ւինները, տերեւաթափ ձիւղերը կաղնինե-
րու, ամէն ինչ ձիւնով ծածկուած էր, նոյն
պէս ճամբաները որոնք հանդարտ ու միո-
րինակ երեւոյթ մը կ'ընծայէին. Գիւղացիք
մերթ շտապաւ կ'անցնէին ձիւնին վրայէն
կրկնօցներուն օձիքները վեր դարձուցած,
կրիայի նման ներս քաշած ցուրտէն կարմը-
լած դէմքերնին, և համայնատարած սպի-
տակութեան վրայ սեւութիւններ կազմելով:

Միայնակ գեղջկական տան մէկ պատու-
հանին ետեւը, տաք սենեակի մը մէջ, ուր
ջիւղոց մը կը ճարճատէր, թիկնաթոռներու
կամ բազմոցի վրայ նստած հինգ անձինք
կային. Մին՝ առանց մօրուքի, առանց պե-
խերու, լուրջ դէմքով գիրուկ մարդ մըն
էր, որ գլանիկ մը ակռաներով բռնած էր
էր եւ մերթ կը ծխէր, ձեռքը բռնած լրա-
գիրը կարդալով. Երիտասարդ մըն ալ կար
նստած թիկնաթոռի մը մէջ, որ վիպասա-
նութիւն մը կը կարդար. Նաեւ մամիկ մը,
երիտասարդ կին մը և աղջիկ մը կային հոն:

— Երեք օրէ ի վեր չգար հայրս, կ'ը-
սէր երիտասարդ կինը, — լրագիր կարդա-

ցող անձին ամուսինը — արդեօք այս իրի-
կո՞ւն ալ գալու դիտաւորութիւն չունի:

— Ինչո՞ւ այդքան մտատանջ կ'ըլլաս, ը-
սաւ ամուսինը լրագիրը վար առնելով.
Հայր թովմաս մեկնած օրը ըսաւ ինծի որ
այս շաբթու գալու միտք չունի, ի՞նչ բանէ
կը վախնաս:

Եւ նորէն լրագիրը կարդալ սկսաւ:

— Եւ սակայն իրաւունք ունի քոյրս, ը-
սաւ երիտասարդը. պահպանները այս օ-
րերս լեռները մէկ երկու գայլեր սպաննած
են. դեռ անցեալ օր Պապ Յակոբոսը և եղ-
բայր Աթանասը նոյնպէս եւ ուրիշներ: Էգ-
գայլի մը դիակը կը բերէին լեռներէն. Օ-
դերը հետզհետէ կը ցրտանան, հաւանական է
որ գեղացիք, մէկ քանի հատերու պատա-
հին. հայր թովմասի համար վտանգաւոր է
մինակ անցնիլ այն լեռներէն. Սատանայ,
ուրիշ ճամբայ ալ չունի հայրս. Կաղնեփայ-
տէ հաստ ցուպէ մը զատ ոչինչ ունի հետը
իրը գէնք, եւ գայլերն ալ ցուպի, փայտի
կարեւորութիւն չեն տար. Հեղինէ իրաւունք
ունի, բայց անտառապահին մարդիկը կրնան
թերեւս հօրս օգնել:

— Է՛հ, բաւական է, գոչեց պատաւ կի-
նը, որ ամուսինն էր բացակայ անձին, որու
վրայ կը խօսէին. — լռեցէ՛ք. Աստուծոյ
սիրուն, կը վախնամ այդ տեսակ մտածում-
ներէ:

Լրագիր կարդացողն, առանց աչքերն
հեռացնելու լրագրին վրայէն՝ միմուաց. —
ինչ եւ իցէ, Աստուած տար որ անվտանգ
հասնէր:

Լռեցին. Մարդը շարունակեց իր ըն-
թերցումը. պառաւ իր գուլպան կը հիւ-
սէր, տիկին Հեղինէ եւ աղջիկն ձեռագոր-
ծով կ'զբաղէին, եւ երիտասարդն վիպասա-
նութիւնը կը շարունակէր կարդալ, ջերոցն
ալ կը ճարճատէր:

Միշտ խաղաղ էր դուրսը, պատշգամբ
ծածկող ձեան վրայէն խառուտիկ կատու մը
կ'անցնէր, խոր ձեան մէջ ընկղմելով իր թա-
թերն, եւ սարսուռով. Փողոցը ոչ ոք կար:

* * *

Այսպէս անցաւ այդ օրը:

Հայր թովմաս չէր եկած. Գիւղեր էր, եւ
տան մէջ ամէնքն ալ կը նիրհէին խաղա-
ղութեամբ:

Պատիկ աղջիկը, մայրը, — Հեղինէ — և մեծ մայրը, մէկ սենեկի մը մէջ կը ննջէին: Կէս գիշեր պիտի հնչէր մի քիչ յետոյ: Աղջիկը արթնցած էր, եւ ահա, մութին եւ լուսեան մէջ ձայն մը հասաւ ականջին: Մտիկ ըրաւ ուշադրութեամբ ու վախով. ոտքի ձայն մ'էր որ վարէն կուգար, եւ որ կը հեռանար տակաւ բակին մէջ: Աղջիկը ականջ դրաւ միշտ, եւ նայեցաւ որ այդ քայլերն ոչ իր հօրն եւ ոչ մօրեղբօրն էին: Մայրն ու մեծ մայրը իր քովն էին. ո՞վ էր վարը քալողը: Հայր թովմաս չէր եկած. ո՞վ կրնար ըլլալ այդ: Խեղճ աղջիկը սարսափելով խորհեցաւ թէ գող մ'էր այն անտարակոյս, թէ, ա՛հ, վեր պիտի ելլէր անշուշտ, թէ իրենց սենեակը պիտի մտնէր դռնոյն ի ձեռին: Ի՞նչ պիտի ընէր, և ի՞նչ պիտի ընէին այն ատեն: Այս մտածումներով պաշարեալ, աղջիկը սիրտն ի դող ծածկեց գլուխը վերմակին տակ, եւ մեծ անձկութեամբ սպասեց այսպէս... Ա՛լ ձայն չէր լսեր: Կրկին բացաւ գլուխը մեքենաբար՝ և մութին մէջ նայելով մտիկ ըրաւ... Յանկարծ դուռ մը վարէն ճռնչեց Աղջիկը հասկեցաւ որ խոհանոցին դուռն էր այն: Նորէն ականջին հասան ոտքի ձայներ: Լսեց որ ամաններ կը խառնուէին... ա՛լ ապահովապէս հաւատաց խեղճը որ գող մէն էր վարը քալողը: Իսկոյն մօրը անկողինէն որ իրեն քովն էր, սկսաւ թեթեւ մը քաշել արթնցնելու համար մայրը... և դողդոջ ձայնով մը մեղմիւ կրկնել.

— Մայր իմ... մայրիկ... մայրիկ, արթնցի՛ր...

Արթնցաւ մայրը, անտեղեակ եղելով թիւններէն, և հարցուց.

— Ի՞նչ կ'ուզես, աղջիկս:

— Մտիկ ըրէ՛, մայրիկ, կարծեմ թէ վարը ձայներ կան:

Մայրը մտիկ ըրաւ... Ոտքի ձայները վերսկսեց էր...

— Հայրդ կամ մօրեղբայրդ ըլլալու են, պատասխանեց ձայնով մը որ հազիւ լսուեցաւ և որու մէջ տարակոյս կար:

— Բայց ո՛չ, մայր իմ, կը կրկնէր աղջիկը սարսափով և մեղմիւ, հօրեղբայրս կամ հայրս այսպէս չեն քալեր... Տե՛ս, կարծես թէ այս քալողը ահագին մոծակներ հագած է. հայրս կամ մօրեղբայրս եթէ

վարը ըլլային, թեթեւ հողաթափներով պիտի քալէին:

Եւ պահ մը սպասելէ յետոյ, մինչ մայրը խորին ուշադրութեամբ ականջ կը դնէր ոտքի ձայներուն՝ ըսաւ ցած ձայնով.

— Գո՛ղ մըն է, մայրիկ:

Տիկին Հեղինէ որ չէր վախնար աղջկան չափ, թեթեւ մը իջաւ մահիճէն եւ գնաց, ոտքին մատներուն վրայ քալելով, գրան մը առջեւ հասաւ, մինչ աղջիկը մեծ մայրը կ'արթնցնէր անդին: Կամացուկ մը բացաւ դուռը և ներս նայեցաւ: Դուռը ամպերուն ետեւէն լուսինը կը փափլէր: Կինը լուսնկայի լոյսէն առաջնորդուած, ամուսինին անկողինին քով գնաց:

— Պ. Անտոն... Անտոն, ինծի նայէ՛:

Եւ արթնցաւ զայն, ինչպէս նաեւ եղբայրը:

... Հինգ վայրկեան յետոյ, Պ. Անտոն որուն ձեռքը ատրճանակ մը կար, կինը եւ ըրտասարդը՝ որ ճրագ մը ունէր ձեռքը, անյան ննջասենեակէն, պատուիրեցին պառակն և աղջկան որ չվախնան ու սպասեն, անցան նաեւ սրահէ մը և սանդուխին դուռը հասան. հոն կանգ առնելով ծռեցան ու ականջ դրին...

* *

Հայր թովմաս վաթսուն տարեկան էր, կլոր. կարմիր և գուարճալի գէմքով, ճերմկած մազերով, առանց մօրուքի ու պեխի: Միջահասակ և գետ էր: Երկար և թուխ վերարկու մը կը հագնէր, որ մինչեւ ներբանները կ'իջնէր և որ լայն ու մեծ օձիքներ ունէր: Ռուսական բրդեայ գլխարկ մը կը դնէր որ յօնքերն ալ կը ծածկէր: Ահագին ցուպ մ'ի ձեռին, զոր կարճաբերձ կաղնիի մը մէկ ճիւղէն կտրած էր, կ'անցնէր տանը վերը գտնուող ձիւնապատ դաշտը, միայնակ իւր ցուպին հետ, ամայի տեղերէ կ'անցնէր, կարմիր և գէլ քիթը ցրտին տալով, որով միշտ պաղ էր այն, օձիքները վեր գարձուցած մինչև ականջները, և ակունքներուն մէջէն մրմռալով.

«... Մամիկ, մամիկ, տե՛ս, տակաւին

Սանին մէջէն, հընդհահաւին

— Մամիկ, մամիկ,—

Կ'ենէ հոտն ու շոգին...» գեղջկական և սիրուն երգի մը մի մասը՝ որուն նախորդ և յետագայ տողերը մոռցած էր... Այսպէս կ'անցնէր կ'երթար Հայր թովմաս,

ահագին մոյկերը ընկղմելով ձիւնին մէջ, մինչեւ հեռաւոր գործարան մը, ուր անտառին ծառերը կտրուելէ յետոյ տախտակներ կ'ըլլային: Հայր Թովմաս գործարանին պետն էր, և կ'երթար կտաւարել զայն:

Չուարձալի անձ մ'էր հայր Թովմաս. երբ տունը ըլլար՝ գեղացիներ ալ կուգային՝ եւ ծիծաղը ու խինդը կը տիրէր հոն. երբ գործարանէն չդառնար՝ տունը կտրձեալ լուռ կը մնար, զի ոչ հայր Թովմաս կար, ոչ բարեկամներ և ոչ ծիծաղ:

Մէկ քանի օրէ ի վեր բացակայ էր տունէն, և ըստ տիկնոջ կարծեաց, գուցէ քանի մ'օր ալ բացակայ պիտի մնար:

Ինչ եւ իցէ. գանձ Պ. Անտոնի, կնոջը եւ երիտասարդին, որք սանդուխին գլուխը կեցած լուծեամբ կ'սպասէին:

Յանկարծ սաքի ձայն մը լսուեցաւ, յետոյ դուռի մը գոցուելուն ազմուկը:

— Ո՛վ կրնայ ըլլալ, գիւղին մէջ մինչեւ այսօր գող մը տեսնուած չէ. թշուառական կը մըմնար Պ. Անտոն ցածէն:

— Իջնե՞նք, հարցուց երիտասարդը մեղմիւ:

— Ո՛չ, մըմնաց մարդը. սպասենք որ հեռանայ այս կողմերէն, և որպէս զի չլսէ և չփախչի, կ'ուզեմ բռնել սատանորդին:

Սպասեցին. խոհանոցէն պղնձեայ ամանի մը ձայնը լսուեցաւ:

— Խոհանոցն է, ամանները կը գողնայ... մըմնաց Տիկին Հեղինէ:

— Հը՛, ըսաւ երիտասարդը, սանդուխէն շատ հեռու է, ուրեմն իջնենք. ձայներս իսկ չլսեր բնաւին:

Եւ սկսան իջնել սանդուղէն, լուծեամբ: Երբ վարը հասան, երիտասարդը վարի սըրահին վրայ. թեթեւօրէն յառաջացաւ ճըրագն ի ձեռին, և սանդուխէն բաւական հեռու գտնուող հինգ աստիճաններով պըղտիկ սանդուխի մը գլուխն հոռաւ. այդ սանդուխին վարը խոհանոցին դուռը կար: Ականջ դրաւ... Ներսէն բռն մը ուտելու ձայնը կուգար: Մարեց իր ճրագը, և սանդուխին գլխէն նայեցաւ դրան, որու ձեղքերէն լոյս կ'երեւէր:

— Մուկը չփախցնենք ականատին մէջէն, մըմնաց երիտասարդը, եւ զգուշութեամբ դարձաւ իր տեղը, քրոջը և Պ. Անտոնի քով, որ հարցուց իրեն.

— Հո՞ն է...

— Հո՛ն է, ըսաւ երիտասարդը:

— Ուրեմն, ըսաւ Պարոն Անտոն, չո՛ւտ, որպէս զի չլսէ գողը, — պատշգամբ ելիր և արձակէ տա — եւ աստիճանակը անոր տըլաւ: — Թող պահպանները գտն, եւ սատանորդին գործը վերջացունենք:

Երիտասարդը վեր ելաւ խոյն, պատահանէն պատշգամբ ցատկեց, ձեռն վրայ: Ամպստ էր երկինքը, գեղը համակ ձեամբ ծածկուած և ձերմալ էր: Խոր լուծիւն կը տիրէր:

Երիտասարդը յանկարծ պարպեց ատըրձանակը օդին մէջ, ձայնը հեռացաւ մի քանի արձագանքներ կողմելով, և կորսուեցաւ խոր լուծեան մէջ: Սպասեց հոն. յանկարծ նշմարեց հեռուն մի քանի ստուերներ, որք իր կողմը կուգային:

— Հը՛, ըսաւ, Պապ Յակոբոսը և տղաքը: Շանց հաչիւններ սկսան լսուիլ հեռուէն, խառն և մարած, ասդիէն անդիէն ստուերներ կ'երեւէին որք վազողներուն բաներ կը հարցունէին եւ անոնց կ'ընկերանային:

— Ապրիք, մըմնաց երիտասարդը, եւ սկսաւ ձեռքով նշան ընել անոնց: Եւ յետոյ ելաւ պատշգամբն և սանդուխէն իջնելով՝ հասաւ Պ. Անտոնի և քրոջը քով:

— Ատրձանակին ձայնը լսեցի՞ք, հարցուց:

— Այո՛, բայց խորուկ կերպով. գրեթէ չլսուեցաւ: Գոնէ մարդ կուգա՞յ:

— Այո՛, պահապանները իմացան և կը վազեն, նոյնպէս գիւղացիք: Այս միջոցին դրսէն շանց խուլ հաչիւններ, և մարդոց ձայներ եկան:

— Ո՛վ կայ, հէ՛յ, հէ՛յ, հասէ՛ք վազեցէք:

— Ահա եկան, ըսաւ երիտասարդը, եւ գնաց նրբանցքէ մ'անցնելով, և փողոցին դուռը բացաւ. դուռը մարդեր կային, եւ մէկ երկու մարդիկ ալ նոր կը հասնէին: Ստիկան էին ասոնք:

Յուպերով մարդերէն մին մօտեցաւ որ Պապ Յակոբոսն էր:

— Ի՞նչ կայ, ահա եկանք:

— Գող մը կայ, զգուշութեամբ ներս մտէք, և բռնեցէք թշուառականը:

— Կեցէ՛ք, մըմնաց ուտիկաններէն մին, որ խոթու դէմք մը ունէր — ո՛ւր է նախ

գողը տեսնենք :

— Խոհանոցն է , ըսաւ երիտասարդը .
ասկից շատ հեռի է խոհանոցը , ասկից մին-
չեւ հոն ձայն չհասնիր :

— Ի՞նչ պիտի ընէք , ըսաւ Պ . Անտոն ,
որ կնոջը հետ վազեր եկեր էր :

— Միջոց մը ունի՞ փաշելու խոհանոցի ու-
րիչ մէկ կողմէն , հարցուց Պապ Յակոբոս :

— Ո՛չ , ըսաւ Պ . Անտոն , այս կողմն է
եկքը :

— Օ՛ , լա՛ւ , պօռայ Եղբայր Աթանաս՝
ծերունի Յակոբոսին տղան : Սկսինք աղմուկ
հանել , որպէս զի շան ձագը երեւան գայ ,
զուարճալի կ'ըլլայ երբոր ինքզինքը դա-
կարթը ինկած տեսնէ : Օ՛ն ուրեմն :

Փակագրիծ մը բանաւք հոս :

Այս ամէն խօսակցութիւնները փողոցը և
տան դրան առջեւ կ'ըլլային և ոչ այնքան
բարձրէն և կ'երեւար թէ գողը խոհանոցին
մէջ իր գործին պարտապաճ ըլլալով՝ չէր լը-
սէր բնաւ խոհանոցէն անդին , սրահէն ալ
անդին , նրբանցքէն ալ դուրս , և փողոցին
դրան առջեւ տեղի ունեցած այս խօսակ-
ցութիւնները :

Եւ ահա յանկարծ , Եղբայր Աթանաս՝ ա-
ռանց ժամանակ թողլու որ ոտտիկանները
արգիլեն՝ դռնէն ներս վազեց իր ձիւնատ և
ահագին մուճակներով՝ և գոչելով ուժգին ,
կոկորդին խորէն :

— Գողը՛ , հէ՛յ , հէ՛յ , պապ՛ս , է՞ , վա-
զեցէ՛ք :

Պապ Յակոբոս , իր սղուն ետեւէն , գիւ-
ղացիք և ստիկանք ծերին ետեւէն , դրնէն
ներս խուժեցին : Նրբանցքը լեցուեցաւ մար-
դերով և աղմուկով , ստիկանք իրենց սու-
րերով խշոցներ կը հանէին , պահապանները
ցուպերնուն մեղեխներէն բռնած զայնս
տախտակամածին կը գտնէին և կը պօռա-
լին տակաւին :

Պ . Անտոն , կինը , երիտասարդը , աղմը-
կայոյզ խուժանէն առաջ վազեցին , սրահէն
անցան , ուր Պ . Անտոնի աղջիկը և անոր
մեծ մայրը սրահին վրայ բացուած պատու-
հանէ մը սիրտ ի դող կը հարցնէին իրենց .
— « Ի՞նչ կ'ըլլան , այս ձայները ի՞նչ են »
և առանց պատասխանելու խոհանոցին պըզ-
տիկ սանդուխին առջեւ վազեցին՝ դուռը
բանալու համար :

Այս միջոցին երբ հետզհետէ աւելցող

ամբոխը կը պօռար և օգնութիւն կը գոչէր
նրբանցքին մէջ , և փողոցին դրան առջեւ
դուրսը , ձիւնին վրայէն լապտերակիր մէկ
քանի մարդիկ կը վազէին դէպի տունը ,
զինեալ գաւազաններով և կը մրմռային :

— Թշուառակա՛ն , ի՞նչ է այս գիշերանց ,
գող կայ , ի՞նչ կայ :

— Եթէ արդարեւ գող մ'է , սա ձիւնոտ
ոտքովս կռնակին այնպիսի հարուած մը պի-
տի տամ որ : Գիշերանց մեղի քունէն ար-
թընցընե՛լ :

— Սատանա՛յ , լապտերիս մոմն ալ կը
հատնի , լուսին ալ չկայ :

Տանը դրան առջեւ մարդ մը , — գեղ-
ջուկ մը , — ատրճանակին ձայնէն և պա-
հապաններուն աղմուկէն , նոյնպէս շանց
հաչիւններէն սոսկմամբ արթնցած , օգնու-
թեան հառնելու համար վազելու ատեն՝
ձեան մէջ կորուսել էր մուճակներէն մին ,
և չէր կրցած գտնել զայն՝ գուլպայով վա-
զել ստիպուելով՝ կը մրմռար , յետոյ կը պօ-
ռար տրանջալով :

— Չա՛ր սատանա՛յ , հիմա ի՞նչ ընեմ :

Գեղացիք , քունը կիսատ թողած՝ աչ-
քերնին չփելով , նրբանցքին մէջ գոր կը
լուսաւորէին մասամբ իրենց պզտիկ լապ-
տերներով , որ իրենց այլանդակ դէմքը ի
յայտ կը բերէր , և նոր ստուերներով կը
լեցնէին , իրարու կ'ըսէին կամ կը հար-
ցընէին . մին կ'ըսէր .

— Հայր Թովմաս ալ հոս չէ , եթէ հոս
ըլլար զուարճալի բան մը կ'ըլլար :

— Այո՛ , կը յաւելուր ուրիշ լապտերա-
կիր մը . գողը՝ օձիքէն բռնած սա պալ
ձեան մէջ կը խեղդէր :

— Ինչո՞ւ չեն բռներ գողը , հարցուց պա-
ռաւ կին մը , երիտասարդ շինականի մը որ
իւր թուր կը թուէր լինիլ :

— Ճիշդ է մամի՛կ , գոցէ փախած է
հիմա :

Ի՞նչ պիտի ընէր այս բազմութիւնը , որ
ցուպ ի ձեռին գիշերանց , մուծին և ցըր-
տին՝ տունը դիմած էր : Գողը պիտի բռն-
էր : Այս աղմուկէն , չփոթէն , դողը՝ եթէ
բաւական ճարպիկ էր , գոցէ խոյս տուած
ըլլար :

Պ . Անտոն , ամուսինը , երիտասարդը ,
ինչպէս ըսինք՝ խոհանոցին դրան առջեւ էին
այս պահուն : Մի քանի մտերիմ գիւղացիք

ալ իրենց ետեւն էին. եւ բազմութիւնը հետզհետէ կը ընուր սրահը:

Պ. Անժոնն ուժգնակի բացաւ դուռը, ներսը մարդ մը կար որ կռնակը իրենց դարձուցած էր. և բան մը կ'ընէր: Զարմանք, ինչո՞ւ չէր փախած մարդը գողը այսինքն, իրենց նայեցաւ իսկոյն:

Եւ ահա, երիտաւարդը, Պ. Անտոն, նոյնպէս գիւղացիք, որք հետաքրքրութեամբ խոհանոցը կը նայէին՝ յետոյ ընկերացան ամենամեծ զարմացմամբ, և ահագին կոկորդալի բրքիչներ արձակելով:

— Գողը՝ Հայր Թովմասն էր:

Ահաւանիկ լուծումը, այս զարմանալի հանելուկին: Հայր Թովմաս, գործարանէն ուշ դարձած էր այդ գիշերը, և երբ հասած էր տուն, արդէն կէս գիշեր էր: Ուրովհետեւ տան դուռը երկու բանալի ունէր՝ անոնցմէ մին իր քովը կը պահէր միշտ: Անով բացած էր դուռը, և ներս մտած: Գրեւապանի պզտիկ ճրագը վառած էր, և ասդին անդին պտրտած՝ ուտելիք մը գտնելու, զի չափազանց անօթի էր առաւօտէն ի վեր:

Ուհանոցին մէջ զայն գտած էր, ու խոզի երչիկ մը ուտելու զբաղած, առանց կարեւորութիւն տալու՝ իրեն համար այս պզտիկ ձայներու, զի չափազանց խուլ էր:

Անտարբեր դիմօք կ'ուտէր իր երչիկը՝ առանց գիտնալու թէ՛ ամբողջ գիւղակ մը գրեթէ՛ կէս գիշերուն խռոված եւ արթնցուցած էր:

Տ. Գ. ՉՐԱՔԵԱՆ

ՄԱՐԹԻՆԻՔԻ ԵՐԿՐԱՇԱՐԺԸ

Մահագոյծ լուրեր տխուր ամէնութիւն մը կուտան երկրաշարժին: Երեկ Շամախի կը կործանէր, այսօր Սէն-Բիէր հիմնայատակ կ'ըլլայ: Միտք չունինք հոս նկարագրել ինչ որ օրաթերթերը կրկնեցին ու կրկնեցին հազար անգամ ծամծմելով: Պիտի ուղէինք միայն աղէտին պատճառներուն վրայ քանի մը տեսութիւններ պարզել՝ խօսելով Մարթինիքի ու Շամախի երկրաշարժերուն վրայ:

ՄԱՐԹԻՆԻՔ. — Սէն-Բիէր՝ Մարթինիքի հիւս. արեւմտեան եզերքին վրայ չաքարեղէգի ու բոսի բանուկ նաւահանգիստ

մըն էր, հիմնուած 1665ին էսնամպիւքի ձեռքով: Քաղաքը կիսալուսնի ձեւ ունէր որու խոռոչին մէջ ծովը նաւահանգիստ մը կը ձեւացնէր՝ թէեւ քիչ մը անհանդարտ: Քաղաքին կռնակը կը բարձրանայ Բըլէ լեւը՝ որու ցից զառիթափը Սէն-Բիէրի վրայ կը նայի: Այս լեռան դէպի ծով իջած կողին վրայ հաստատուած էին Սէն-Բիէրի ամէնէն գեղեցիկ տուները, և ամառը քաղաքին բնակիչները դաշտային հացկերոյթներ կը սարքէին հրէշ լեռան քարուտ և անբեր եզրերուն վրայ, հին շատ հին՝ ժամանակուան բորբոքումի մը հետեւանօք բացուած մէկ խառնարանին մէջ կազմուած պզտիկ լիճին եզերքը: — Աղէտին պատմութիւնը ամէնքնիդ ալ գիտէք: Մայիս 3 ին արդէն մոխրի թեթեւ անձրեւ մը սկսած էր քաղաքին վրայ, բնակիչները՝ ասանկ թեթեւ երեւոյթի մը կարեւորութիւն չէին ընծայեր: Քանի մը օր վերջ քնացած գաղանը կենդանութեան նշաններ ցոյց տուաւ, գետինը սկսաւ շարժիլ, ստորերկրեայ մանջիւններ՝ ահաբեկ բնակիչներուն սարսափ կ'աղդէին: Բայց մէկը մտքէն չէր անցներ թէ թեթեւ երկաշարժէ աւելի բան մը կարենայ ըլլալ այդ: Ամառն վեցին էր երբ հրդէն փունջ մը լուսազարդեց Բըլէի լեռան գագաթը, ատրաշէկ հալած մետաղի կտորներու անձրեւ մը սկսաւ տեղալ, հրավառ լավայի հեղեղ մը ողողեց լեռան կողերը ու յորդեց քաղաքին մէջ, յառաջանալով մինչեւ ծովուն բացերը: Դժողքի բոլոր աւերները ասկէ աւելի չպիտի կրնային կործանում սպիռել: Երեւակայեցէք տեղատարափ կարկուտ մը որ ձեռքի մեծութեամբ հրաշէկ ուռմբեր կը տեղացնէ, կրակի ողողում մը որ անցած տեղը հալած մետաղով կը լեցնէ:

Ինչ էր այս աղէտին պատճառը: Ինչո՞ւ համար Բըլէ լեռը այսքան երկար լուծեանէ մը ետքը կ'արթննար: Քանի մը բացատրութիւններ տանք ասոնց վրայ, բացատրութիւններ որոնք պարզ ենթադրութեանէ մը աւելի գիտական ստուգութիւններ են:

Միլիոնաւոր անգամ կրկնուած է թէ քանի երկրիս երեսէն դէպի խորերը երթանք այնքան ջերմութիւնը կ'աւելնայ. ասկէ հետեւցուցած են կեդրոնական հուրի տեսութիւնը՝ որու իրականութիւնը ուրիշ երե-

ւոյթներով հաստատուած է : Եթէ շատ բարձր լեռան մը խարխիւէն ներս թափանցենք հորիզոնական ճամբայ մը պեղելով, պիտի տեսնենք որ ամէն մէկ երեսուն մէկը յառաջ երթալուն, ջերմաչափը մէկ աստիճան պիտի բարձրանայ . ըսել է երկրիս ներսը քառուած հրաշէկ վիճակը որ ջերմական սոյն երեւոյթը յառաջ կը բերէ, գոյութիւն ունի նաեւ բարձր լեռան մը կողերուն մէջ ալ, և կամ տարբեր կերպով բացատրելով, լեռները՝ մեր կարծածին պէս դազաթէն սկսեալ մինչեւ խարխիւն՝ քարի ու ապառաժի կոյտ մը չեն, հապա հողէ նուրբ խաւ մըն են որ ներքին հրաշէկ վիճակ մը կը ծածկեն : Անցողակի դիտել տանք թէ լեռան մը կողին վրայ բլուզում յառաջ բերելով անոր թանձրութիւնը նուազեցնելը կամ ճեղք մը բանալը աւելի դիւրին է թէ մարդուն և թէ բնութեան համար, քան թէ հորիզոնական հողի խաւերը ճեղքել կամ ծակ մը բանալը :

Անդիլեան կղզիտումբը թրջող ծովը իր ամէնէն խոր տեղերէն մէկը կը ներկայացնէ Մարթինիքի եղէրքները : Ուրեմն կըրնանք ընդունիլ թէ Սէն-Բիէր շինուած էր առ նուազն չորս քիլոմէթր բարձրութիւն ունեցող լեռան մը վրայ : Արդ այդ ահագին բարձրութեան վրայ, յատակէն մինչեւ վեր, ծովուն ջուրը կը ձեծէ, կը փչի, կը լուծէ կղզին ձեւացնող հողէ պատեանը : Միթէ չկրնա՞ր ըլլալ որ ջուրերը ճեղք մը բացուածք մը պեղելով թափանցեն մինչեւ այն կէտը ուր ամէնէն կարծր մետաղներն իսկ հեղուկ վիճակ մը ունին : Անշուշտ այդ ճեղքը մէկ վայրկեանի մէջ բացուած չէ, եւ ո՞վ գիտէ որքան ժամանակներ պէտք եղած են անոր ընդարձակուելուն . անշուշտ այդ բացուածքէն դուրս կուգային ներքին կաղերը, շոգիները որոնք, ինչպէս հրաբուխի մը արձակած կաղերը, լուծելի ըլլալով ջուրի մէջ՝ շուտով պիտի կորսուէին, խառնուէին այդ սոսիօմի լուծոյթի ահագին տարածութեան մէջ : Երբ այդ ճեղքը կամ ճեղքերը փոքր էին, ծովուն ջուրը շատ քիչ քանակութեամբ ներս կը ծծուէր, և այդ ալ շոգիի վերածուած շուտով դուրս կը վանուէր ծովուն ջուրերուն մէջ : Բայց եղաւ ժամանակ մը ուր ներս ծծուած ջուրի քանակութիւնը ահագին եղաւ, և կազմուած

շոգին, սոսկալի ջերմութեան ազդեցութեան տակ ձգտելով անհաշուելի ճնշիչ զօրութիւն մը ունեցաւ, ծաւալը ընդարձակուելով ետ մղեց հալած նիւթերը որոնք արդէն բացուած հին հրաբուխին ճամբան բռնեցին եւ նախկին խառնարանին բերանը գոցող քարացած լավայէ խցանը դին միջ նետելով ճամբայ մը բացին դուրս հոսելու համար :

Ահա՛, ինչպէս կը տեսնեք բացատրութիւն մը որ կեդրոնական կրակին վրայ հիմնուած է : Յաջորդ թիւով պիտի տանք « Լա Նաթիւս » գիտական թերթին խմբագրապետ Հանրի աը Բարվիլի կարծիքը որ նոյնպէս ներքին հուրի վրայ հիմնուած է, և որ իբր պատճառ կ'ընդունի լուսինը :

ՋԱՐԵՆ Ն. ՊԵՐՊԵՐԵՆ

Գ Ի Տ Ա Ն Ա Ն Վ Լ Պ

Ժ Ի Ի Լ Պ Ե Ր Ն

ՈՒՂԵՒՈՐՈՒԹԻՒՆ

ԴԵՊԻ ԵՐԿՐԻՍ ԿԵԴՐՈՆԸ

(Շարունակութիւն 19րդ թիւ 1.6)

Նորանցքը շոգիով լեցուեցաւ . ջուրը պիտի դետակ մը կը կազմէր ու խոխոչելով կ'երթար կը կորսուէր ճամբուն դարձուածքներուն մէջ :

— Ահա՛ սքանչելի աղբիւր մը, գոչեցի, կ'առաջարկեմ որ վայն գանալին անունը տանք անոր :

Առաջարկը ընդունուեցաւ և գետը միջրտելով անունը դրինք Հանս Պադ :

Լաւ մը ծարաւնիս յաղեցնելէ ու ջրամանիս լեցնելէ ետքը ու վեցինք աղբիւրը գոցել՝ ժայռի կտորներով, բայց ջուրի հոսանքը այնքան ուժգին էր որ անկարելի եղաւ այդ :

— Ինչո՞ւ համար կը գոցենք կոր, հարցուց հօրեղբայրս յանկարծ :

— Որովհետեւ . . . կովմացի տառնց պատճառ մը գտնելու :

— Երբ ջուրերնիս կրկին հատնի, ա-


պահով ենք նրէն աղբիւր մը գտնելնուս։
— Անշուշտ ո՛չ։

— Ուրեմն ձգենք որ ջուրը վաղէ։ Թէ մեր ճամբան ցոյց պիտի տայ և թէ ա՛լ ծա-
րաւէն վախճալիք բան մը չպիտի ունենանք։

Շատ չանցած երեքնիս ալ խոր քունի մէջ ընկզմած էինք։

դուէր ու գրեթէ հորիզոնական էր։ Յուլիս 10ին, ուրաթ իրիկուն հաշուեցի որ Ռէյք-
եալիքի հարաւ-արեւելեան կողմը կը գըտ-
նուինք 30 մլոն հեռաւորութեամբ և 2 ու
կէս մլոն հսկին խորը։

Ուրեքնուս տակ, յանկարծ ահագին
հոր մը բացուեցաւ հօրեղբոր։ մեծ ուրա-



ժի .

Յաջորդ օրը քաջած նեղութիւններուս
յիշատակը միայն մնացեր էր։ Ա՛լ բանէ մը
վախճալիք չունէի։ արհամարհանօք պիտի
մերժէի ետ դառնալու ու եւ է առաջարկ։
Ինչո՞ւ համար երկրիս կեդրոնը չպիտի հա-
նէինք՝ հօրեղբորս պէս միաքը դրածը կա-
տարող մէկը, Հանտի պէս ճարպիկ առաջ-
նորդ մը և ինձի նման « համուռած » եղ-
բօրորդի մը։

Ճամբան դէպի հարաւ-արեւելք կ'ուղ-

խութիւն պատճառելով որ խնդութենէն
ծափ կը զարնէր։ Ջուանները առաջին ան-
գամուան պէս կարգի դրինք ու սկսանք
վար իջնել։ Քառորդ ժամը անգամ մը դա-
դար կ'առնէինք եւ ժայռի դուրս բցուած
մասերու վրայ կառչելով քիչ մը ասելիք
կամ ջուր կը բաժնէինք իրարու։

Այս էջքը երկու օր տեւեց և այդ մի-
ջոցին երկու մլոնէ աւելի վաղ իջած էինք։
Ասկէ ետքը ճամբան նորէն հորիզոնական
դիրք մը առաւ։ Շարաթ օր ահագին քա-
րայրի մը բերանը հասած էինք։

իւն.

Յաջորդ օրը կիրակի՝ պիտի պահէինք։ Առաւոռն երբ արթնցայ, հաճելի հանգստութիւն մը զգացի մտածելով որ այդ օրը ճամբայ չպիտի քաշէինք։ Թէեւ արեւը շէր դար օրուան սկիզբը աւետելու, սակայն զտնուած աեղեքնիս շատ սիրուն տեսարան մը կ'ընծայէր։ Արդէն լուսին, արեգակ, լուսաւորներ, ամէն բան մուցած էինք։

Նախաճաշէն ետքը հօրեղբայրս հաշիւները կարգի դնելու դրաղեցաւ։

— Զամբայ երած կէտերնուս 85 մղոն տեղ յատկացած ենք, ըսաւ։

— Ըսել է Առաւելեանի տակը կը զըռնուինք հիմակ։

— Այո՛,։

— Եւ կարելի է ստակայի փոխորիկ մը կը փրթի մեր գլխուն վերեւ։

— Ինչո՞ւ չէ... բայց մի վախ՛ար, Աքսէլ, մեզի անկէ դատող պատր բաւական հաստ է. եթէ չեմ սխալիր 16 մղոն է։

— Տասնըկէ մղոն, գոչեցի, բայց զի տունները այդքան թանձրութիւն մը կուտան երկրիս կեղեքին, և անոնց հաշիւներուն նայելով այս խորութենէն վար 1500 աստիճան ջերմութիւն մը բլլալու էր։

— «Ըլլալու էր» տղաս։

— Եւ բաւար այս կրանիթները հաստատուն մնալու տեղ հալած վիճակ մը ունենալու էին։

— Կը տեսնես որ այդպէս չէ։ Ձեր նախափը քանի՞ աստիճան կը ցուցնէ։

— Քսանեւթթը աստիճան վեց տասներորդ։

— Ըսել է դեռ հազար չորս հարիւր եօթանասուն եւ չորս աստիճան, չորս տասներորդ պէտք է, որպէս զի զիտունները շիտակ խօսած ըլլային։ Ըսել է Տափի չէր սխալեր ևւ ես ալ իրաւունք ունէի անոր ըսածին հաւատալու։ Ի՞նչ կրնաս ըսել։

— Ոչինչ, պատասխանեցի. թէ և շատ բաներ ունէի բռնիք։ Տափի դրութիւնը բնաւ չէի ընդունել։ Անշուշտ զտնուած տեղերնիս լաճայի անթափանց խաւով մը պատած ըլլալով դուրսի ջերմութիւնը չէր կրնար մինչեւ մեզի զգալի ընել տալ իր ազդեցութիւնը։

— Հօրեղբայր, ըսի, հաշիւներդ չիտակ

է, բայց ներեցէք որ անկէ բան մը հետեւընեմ։

— Խօսէ՛, աղաւ, ուղածդ հարցուր։

— Իտալիայի լայնութեան աստիճանին տակ, ուր կը գտնուինք, երկրին շառաւիղը գրեթէ 1583 է։

— Հազար հինգ հարիւր տասուն երեք մղոն եւ մէկ երրորդ։

— Կլորիկ հաշուով 1600 բռնք։ Արդ 1600ին վրայ մենք մինչեւ հիմա 16 մղոն կարեցինք։

— Այո՛,։

— Եւ ասի 85 մղոն շեղ ճամբու մը վըրայ։

— Կատարեւապէս։

— Քսան օրուան մէջ։

— Քսան օրուան մէջ։

— Արդ, տասնըկէ մղոնը՝ երկրիս շառաւիղին մէկ հարիւրորդը կ'ընէ։ Այս հաշուով 2000 օր կամ հինգ ու կէս տարի պիտի իջնենք տակաւին։

Ուսուցչապետը չպատասխանեց։

— Առանց հաշուելու որ եթէ 16 մղոն ուղղահայեացի համար 80 մղոն հորիզոնական ճամբայ պէտք է, երկրիս կեդրոնը հասնելէ շատ առաջ, երկրագունդին երեսի մէկ ուրիշ կէտէն դուրս պիտի ելլենք։

— Կրողին երթա՛յ հաշիւներդ, գոչեց հօրեղբայրս բարկանալով. կրողին երթա՛յ երթադրութիւնն'րդ. ինչի՞ վրայ հիմնուած են ատոնք։ Ո՞վ կրնայ պնդել թէ այս ճամբան շիտակ երկրիս կեդրոնը չպանիր։ Ինչ ալ ըլլայ, ինձմէ առաջ մէկը եկած է հոս. եթէ անիկա յաջողեցաւ՝ ևւ ալ պիտի յաջողիմ։

— Անշուշտ պիտի յաջողիք, բայց կըրնամ...

— Կրնաս պապանձիլ, Աքսէլ, երբ ասանկ ապուշ բաներ ըսել ուզես։

Տեսայ որ հօրեղբոր մտքին տակէն ահարկու ուսուցչապետը դուրս կ'ելլէր, ուստի ձայնս քաշեցի։

— Հիմա, ըսաւ, ծանրաշափը նայէ՛, ի՞նչ կը ցուցնէ կոր։

— Ահագին ճնշում մը։

— Տեսա՛ր, կամայ կամայ իջնելով շատ խիտ մթնոլորտի մը վարժուեցանք առանց նեղուելու։

Այնպէս է. պատասխանեցի, վախնալով

ՀԱՆՐԱԳԻՏԱԿ կը հրատարակուի ամիս ամսոյ 1ին, 10ին եւ 20ին			
Կ. ՊՈԼՍՈՅ ՀԱՄԱՐ		ՀԱՍՑԷ	
Տարեկանը	40 դահեկան	ՆՇԱՆ Կ. ՊԵՐՊԵՐԵԱՆ	ԳԱԽԱՌՆԵՐՈՒ ՀԱՄԱՐ
Վեցամսեան	20 »	Կ. ՊՈԼԽ	Տարեկանը 45 դահեկան
Եռամսեան	10 »	ՊԱՊ ԱԼԻ ՃԱՏՏԷՍԻ	Վեցամսեան 25 »
ՌՈՒՍԻՈՅ ՀԱՄԱՐ		ԹԻԼ 38	Եռամսեան 12 1/2 »
Տարեկանը	4 ըուպի		ՕՏԱՐ ԵՐԿԻՐՆԵՐՈՒ ՀԱՄԱՐ
			Տարեկանը 10 ծրանք

Ձեռքէ կը ծախուի հաւոր 40 փարայ

որ նորէն կը բարկանայ . բայց այս ճնշումը երթալով պիտի աւելնայ :

— Այո՛, քանի իջնենք, օդը այնքան պիտի խտանայ. նոյնպէս մարմինները իրենց ծանրութիւնը կամաց կամաց պիտի կորսնցնեն, ինչու որ երկրիս կեդրոնին վրայ ճշգրտութեան զօրութիւնը ոչինչ է :

— Գիտեմ : Բայց վերջապէս օդը խտանալով ջուրէն ալ պիտի ծանրանայ, այն ատեն ի՞նչպէս պիտի իջնենք :

— Բա՛հ, գրպաննիս քարեր կը լեցնենք : Թարգմ.

ՁԱՐԵՆ Ն. ՊԵՐՊԵՐԵԱՆ

(Շարունակելի)



ՇԱՐԱԳԻՏՈՒԹԵԱՆ ՆԻԻԹԵՐ

1. — Նախորդ թիւին մէջ զրուած նիւթերուն վրայ գրած շարադրութիւննիդ առաջին հանդիսացած եւ խոստացուած պարգիւն ստացար : Նամակով մը շնորհակալութիւն յայտնեցէք :

2. — Ի՞նչ ըլլալ կ'երեւոյ՞ք ապագային մէջ (հուրուստ, կամ մեծ անուն ունեյող, կամ պատուաւոր քաղաքացի մը) :

3. — Հիւանդ ըլլալ կ'ուզե՞ք, ինչո՞ւ համար : Սոյն մրցումներուն առաջին հանդիսացողին պիտի նուիրենք « Բուրաստան Մանիսնց »-ի մէկ տարեկանը, երկրորդին վեցամսեայ « Հանրագիտակ », իսկ երրորդին մէկ « Ծաղկաբայ եկեղ. Պատմութեան » : Ֆրութիւնները պէտք է մինչեւ Յունիս-20 խմբազրուեալն հասցնել « Հանրագիտակի » կողմին վրայ գտնուած մրցումի կնիքով միասին :

ՆԱՄՍԿԱՏՈՒՓ ՀԱՆՐԱԳԻՏԱԿԻ

Թալաս — Հ. Ս. էֆ. Ս. — 12 եւ 15 թիւերը զրկուեցաւ :

Այնթապ. — Տ. էֆ. Փ. — Ստացանք : Շնորհակալութիւն ձեր սրտագին համակրանաց :

Էլէվիս. — Ա. էֆ. Ա. — Ղըկեցինք 20 թիւէն :

Թօրաթ. — Խ. էֆ. Թ. — Ձեր յանձնարարութիւնները կատարելով զրկուեցաւ Սամսոն : Մանրամանութիւնը նամակով : Յ. էֆ. Ե. ի 18րդ թիւէն սկսեցինք զրկել :

Նիկոմիդիա. — Յ. էֆ. Տ. Ա. — Ստացանք եւ արժանագրեցինք : շնորհակալ ենք :

Երզնկա. — Պ. էֆ. Ա. — Ըսած նամակնիդ եւ յանձնարարութիւննիդ մեզ հասաւ :

Իզմիր. Կ. էֆ. Մ. — Ստացանք : Ձատ նամակ զրուած է :

Հիւսէյնիկ. — Կ. Մ. Յ. էֆ. — Ստացանք նամակնիդ : Կապան Մատեն զրկուեցաւ 4րդ թիւէն սկսեալ : Անդորրագիրները զրկուեցաւ ծէգ :

Սամսոն. — Յ. էֆ. Ն. — Ստացանք : Յանձնարարութիւննիդ թղտատարով զրկուեցաւ :

Տարէնտէ. — Մ. էֆ. Թ. — 23 թիւ հրատարակուած է, գինն է 23 ղշ թղտատարի ծախք 5 ղշ :

Ատանա. — Յ. էֆ. Տ. Պ. — Ստացանք : շնորհակալութիւն :

Ա. էֆ. Գարահիսար. — Ա. էֆ. Պ. — Յանձնարարութիւննիդ կատարելով յա՛մնեցինք : Ձատ նամակ զրուած է :



Մեր նոր հասցէին ուղարկութիւն ընել կը խնդրուի :

نشانه بربریان مطبعه جی

استانبول باب عالی جادسی نو مرو 38

ՆՇԱՆ Կ. ՊԵՐՊԵՐԵԱՆ

ՏՊԱԳԻՏ-ՀՐԱՏԱՐԱԿԻՉ

Կ. Պոլիս Պապ-Ալի ճաճէսի քիւ 38

NICHAN BERBÉRIAN

IMPRIMEUR-ÉDITEUR

Stamboul, Bab-Ali Djaddéssi N. 38

Կը խնդրենք մեր Մեծ. Գործակալներէն եւ Բաժանորդներէն՝ որ Հանրագիտակի Երգ թիւէն աւելորդ եթէ ունին՝ մեզ վերադարձնելու շնորհ ընեն :

ԽՄԱԳԻՐԱՊԵՏ — ԱՐՏՕՆԱՏԷՐ

ԱՐՄԷՆ ԼՈՒՍԻՆԵԱՆ

ՏՊԱԳԻՏ — ՀՐԱՏԱՐԱԿԻՉ

ՆՇԱՆ Կ. ՊԵՐՊԵՐԵԱՆ

Պապը Ալի ճաճէսի, Թիւ 38, Իզմիր լրագրի դէմ

ՆՇԱՆ Կ. ՊԵՐՊԵՐԵԱՆ

Տ Պ Ա Ր Ա Ն Ը

Փոխադրուած ըլլալով՝

Կ. ՊԵՐՊԵՐԵԱՆ, ՊԱՊԵՐ ԱՆԻ ԶԱՏՏԷՍԻ, ԹԻԻ 38. ԻՆՏԵՐՆԱԿԱՆ ԴԻՄԱՑ

Ստացած է տպագրական նոր

կազմակերպութիւններ

եւ կը սպազրէ ամեն
սեսակ գիրքեր, ման-
ազդեր, հանդեսներ, օրգաբերակ, հարսանեաց հրաւիրագրեր, նամակազուխներ, այ-
ցաբարդեր, եւ սպազրութեան վերաբերեալ ամեն սեսակ պիտոյքներ: — Տպարանին սեփական
2000է աւելի պատկերները յանախորդաց տրամադրութեան տակ են ձրի:

Անմրցելի մատուցիւն եւ ճշդապահութեամբ

գաւառներէն ալ կ'ընդունի ամեն սեսակ յանձնարարութիւններ:




ՀԱՆՐԱՊԵՏԱԿԻ նոր բացած Շարադրութեան մրցումներն
ժամանակցողները պարտին սոյն կտրոնը կտրելով՝ իրենց գը-
րութեանց հետ ղրկել Խմբագրութեանս, հակառակ պարա-
գային՝ նկատողութեան չեն առնուիր:

Հանրագիտակ ձեռքի կը ծախուի Պոլսոյ մէջ հատ
40, իսկ գաւառաց մէջ 50 փարսյ:

Թ Է Յ

Թ Է Յ

Թ Է Յ



Ը Ն Տ Ի Ր

Հ Ո Տ Ա Ի Է Տ

Խ Ն Ա Յ Ո Ղ Ա Կ Ա Ն

Կ. ԵԱՎՐՈՒԵԱՆ և Յ. ԻՍԱԳՈՒԼԵԱՆ վաճառատունը պատրաստ՝ և թէ օր ըստ օրէ
աւանդ թարմ և ազնուագոյն տեսակ թէյերով կրնայ այսօր անմրցելի աժանութեամբ
գոհացում տալ նոյն իսկ էն խտապահանջ թէյի սիրահարներու: ԵԱՎՐՈՒԵԱՆ եւ ԻՍԱ-
ԳՈՒԼԵԱՆ հատատութիւնը կը թղթակցի գաւառներու հետ եւ յանձնարարութիւններ կը
կատարուին ամենտոյն ճշգրութեամբ:

Աժան, ընտիր ու հոտաւէտ թէյ գործածողներու ջերմապէս կը յանձնարարենք ան-
դամ մը այցելել Կ. ԵԱՎՐՈՒԵԱՆ եւ Յ. ԻՍԱԳՈՒԼԵԱՆ վաճառատունը, ձէլալ-Պէյ խանի
կից թիւ 10, ուր պիտի դռնեն մեծաքանակ և փոքրաքանակ թէյի ճոխ մթերք մը:

Ա. Ժ. Ա. Ն

Ա. Ժ. Ա. Ն

Ա. Ժ. Ա. Ն